ՓՈՐՁԱԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ալբեր Պենսըլեն նոր էր կախվել առաստաղի կեռից, երբ տեսավ, որ դուռը բացվեց և մի փոքրիկ, սև կերպարանք մտավ սենյակ, քաղաքավարությամբ բարևեց իրեն: Կախյալը մի հայհոյանք խոխոացրեց, ապա իբրև բողոքի նշան, ոտքերը ճոճեց դատարկության մեջ: Սև մարդուկը առանց մազաչափ անգամ շփոթվելու նման ընդունելությունից, մահճակալին դրեց կտավե հաստափոր պայուսակը, սեխաձև գլխարկը, հովանոցը և աղավնու կաշվից ձեռնոցները:

Նրա դեմքը գունատ էր, մետաքսաթղթի նման ճմրթված, աչքը սրատես, քիչ թախծոտ՝ աղավնի թռցնողի աչքի պես: Կզակին մի գորտնուկ կար:

Մեծագույն հանգստությամբ նա ելավ ոտնատակնդուղքի վրա, ազատեց Ալբեր Պենսըլենի մարմինը, որը կոճղի պես փուլեց գետնին, հետո քշտեց թևերը:

— Իմ անունը Ֆութեն [illegible] ուք մոռացել էիք կողպել դուռը:

Ալբեր Պենսըլեն չպատասխանեց, որովհետև իրեն մեռած էր համարում: Նրա լռությունից անհանգստացած սև մարդուկը պայուսակից հանեց մի շիշ ռոմ, հովհար, անգլիական աղ, սպունգ և անցավ դժբախտին վերակենդանացնելու պարտականությանը:

Նա գործում էր անվրեպ, մանրիկ շարժումներով, կռանում էր, շտկվում, շրջվում և դրանից հոդերը ճրթում էին չոր հացի նման:

Նա քթի տակ դնդնում էր.

Հանդարտ ծովի վրա... այ,
Մուխ էր ծածանվում... այ:

Ալբեր Պենսըլեն բացեց աչքերը, խորը հառաչեց.

— Ի՞նչ եք անում այստեղ:

— Ձեզ վերակենդանացնում եմ,— պատասխանեց Ֆոսթեն Վանթրը:

— Ավելի լավ կլիներ ուրիշի գործերին չխառնվեիք:

— Երեխայի նման եք դատում: Հապա, խմեք այս փոքրիկ բաժակը:

Հուսահատը բարձրացրեց գլուխը, մի կում արեց և անմիջապես թքեց:

— Ոչ, այլևս ոչ մի բանից համ չեմ զգում: Թե իմանայիք...

— Ես ամեն ինչ գիտեմ, ամեն ինչ: Գիտեմ, որ դուք քսանհինգ տարեկան եք, փող չունեք, ապագա չունեք, ապրում եք առանց ընտանիքի, առանց սիրուհու և ինն ամիս է տան վարձ չեք տվել:

— Լռեք,— մրմնջաց Ալբեր Պենսլեն:

— Մի քանի շաբաթ է հետևում եմ ձեզ: Ուղարկել եմ իմ ռեկլամը, «Հուսահատներ, դրամի վերածեք ձեր հուսահատությունը: Մանրամասն տեղեկությունների համար դիմել պարոն Ֆոսթեն Վանթրին, 17, Օռելիեն Լամբեր փողոց»: Ինչո՞ւ ձայն չէիք հանում:

— Ինձ լուրջ չէր թվում:

— Լուրջ չէ՞ր թվում: Բոլորդ մի սանդի կտավ եք: Լսեք, ես եկել եմ ձեզ առաջարկելու փող աշխատելու և բախտավոր ծերություն ապահովելու միջոց:

— Քունս տանում է,— թոնթորաց Ալբեր Պենսլեն:

Ֆոսթեն Վանթրը անհամբեր ճթթացրեց մատները:

— Սպասեք, սպասեք, թույլ տվեք բացատրեմ: Դուք անպայման լսած կլինեք պրոֆեսոր Օտտո Դյուպոնի անունը:

— Օրթոպեդիստի՞:

— Ասենք թե: Ձնայած նա ոչ թե ոսկորներ է շտկում, այլ՝ բնավորություններ:

— Չէ, ուրեմն չեմ ճանաչում:

— Պրոֆեսոր Օտտո Դյուպոնը ունի աշխարհով մեկ հռչակված հիվանդանոց: Այնտեղ կիրառում է իր ստեղծած դեղամիջոցը, որի նպատակն է ձևավորել և ձևափոխել բնավորություններ: Օրինակ, ներկայանում է դրևէ ամաչկոտ պարոն: «Ես ուզում եմ լինել ինքնավստահ»: Մի սրսկում: Տասնօրյա հանգիստ: Եվ ամաչկոտ պարոնն տուն է վերադառնում ինքնակալի գոռոզամտությամբ: Հոգեբանական օրթոպեդիան, իբրև գիտություն, դեռևս երիտասարդ է և շատ է նուրբ: Երբեմն չնչին շեղումը կարող է անպատմելի աղետ առաջացնել: Պրոֆեսոր Օտտո Դյուպոնը նախքան հաճախորդին սրսկելը, իր դեղամիջոցի ազդեցությունը փորձում է օգնականների վրա, որոնց մենք անվանում

ենք «բնավորություն փորձարկողներ»: Հիվանդանոցն ունի քսան մարդ: Բայց մեր հաճախորդների թիվն օրեցօր աճում է: Ինձ հանձնարարել են գտնել մի հոգի ևս: Այդ փոքրիկ աշխատանքի համար անմիջապես մտածեցի ձեր մասին: Կունենաք բնակարան, սնունդ, սպիտակեղեն: Ձեր տրամադրության տակ կլինի սքանչելի պարտեզ, կօգտվեք ձեր գործընկերների բարեկամությունից: Դեղամիջոցը հոյակապ է: Երկու տարուց հետո ձեզ իրավունք կվերապահվի հեռանալ մեզանից, ընդ որում մինչև ձեր կյանքի վերջը կանոնավոր կերպով թոշակ կստանաք:

Ֆոսթեն Վանթրը մի փոքր շունչ առավ, թուքը կուլ տվեց և շարունակեց:

— Հը, ի՞նչ կասեք, երիտասարդ: Մի՞թե հրապուրիչ չէ:

— Եթե ձեր առաջարկած աշխատանքը առավելություններ ունենար, այդքան չէիք չարչարվի փորձակենդանիներ ճարելու համար:

— Նախ, ոչ թե փորձակենդանիներ, այլ բնավորություն փորձարկողներ: Բացի այդ, ցանկանալը բավական չէ: Անհրաժեշտ է ֆիզիկական որոշ հակվածություն: Օրգանիզմի դիմադրողականություն: Բյուրեղի պես մաքուր հոգեվիճակ: Հոգեկան հավասարակշռություն, ջղերի կատարյալ համակարգ: Մտային առաջնակարգ կառուցվածք: Հատկություններ, որոնցով դուք լիուլի օժտված եք: Ահա, կարդացեք այս պայմանագիրը: Ստորագրեք ներքևում, ձախ կողմում: Ծտապեք: Դեռ պետք է հասնեմ Բաստիլի կողմերը՝ կանխելու մի սպանություն նույնպես:

Նա արդեն փակում էր ռոմի շիշը և մայրական հոգատարությամբ տեղավորում պայուսակի մեջ:

Ալբեր Պենսըլեն աչքը գցեց առաստաղի կեռին, ապա դրոշմանիշով պայմանագրին:

— Ստորագրե՞մ, թե կախվեմ:

— Լավ ասացիք,— բացականչեց Ֆոսթեն Վանթրը, մեկնելով ինքնահոսը:

Երիտասարդը թուղթը դրեց հատակին և թույլ-թույլ ստորագրեց:

— Վաղը, առավոտյան ժամը իններին պատրաստ եղեք,— ասաց Ֆոսթեն Վանթրը:— Ձեր ետևից մեքենա կգա: Ես հիմա կկարգավորեմ նաև ձեր բնակարանի վարձի խնդիրը:

Հենց Ֆոսթեն Վանթրը գնաց, երիտասարդը փովեց անկողնուն, անմիջապես խոր քուն մտավ և ընկավ երազների գիրկը: Գնում էր ցեխոտ, երկար ճանապարհով: Գնում էր դեպի հորիզոնում թրթռացող նարնջագույն լույսը: Եվ ամեն երեք քայլափոխից հետո, իրենից մի մաս պոկվում ընկնում էր· մի մատ, մի շրթունք, մի կոպ: «Անհրաժեշտ

է, որ ես տեսեմ մինչև վերջ», մտածում էր նա: Այդ պահին հանկարծ ետ է նայում, տեսնում է Ֆոսթեն Վանթրին: Սա գալիս էր իր ետևից, կտավն ալայուսակը թևի տակ: Փոքրիկ ծերուկը ամեն երեք քայլափոխից հետո կուանում էր, վերցնում իր կորցրած մասերը: Եվ դեռ հայտարարում էր. «Միա՜մ, միա՜մ, ի՜նչ սիրուն մատ է: Միա՜մ, միա՜մ, ի՜նչ սիրուն կոպ է»: «Սպասե՛ք, սպասե՛ք»,— գոռում էր Ալբեր Պենսըլեն, բայց նա օրորում էր գլուխը. «Ոչ»: Արդեն ստորագրել եք: Միա՜մ, միա՜մ, ի՜նչ սիրուն ականջ է»:

Երբ արթնացավ, բարձն ամբողջովին թրջվել էր արցունքներից:

Պրոֆեսոր Օտտո Դյուպոնի հիվանդանոցը գտնվում էր Փարիզի շրջակայքում: Մեծ քառակուսի շինությունը՝ բազմաթիվ լուսամուտներով ու պատշգամբներով, վեր էր ձգվում պարտեզի կենտրոնից: Պարտեզի շուրջը, հաշվապահի ստորագրությունների նման, ոլորվում էին ծառուղիները: Հազվագյուտ ծառերն իրենց ստվերների մեջ էին առել նստարանները, որոնց վրա հանգստանում էին ապարիզիոնները, մտածելով իրենց անձնավորության վերջին ընդհատակյա բախումների մասին:

Կենտրոնական շինության ետևում գտնվում էր բնավորություն փորձարկողների տաղավարը: Դա վարդագույն աղյուսից կառուցված երկհարկանի տուն էր՝ ծաղիկներով շրջապատված: Միջանցքները ծածկված էին մուգ կապույտ լինոլեումով: Յուրաքանչյուր սենյակի դռան վրա փակցված էր ցուցանակ. «Զղային», «Երազկոտ», «Բարեսիրտ», «Գրասեր և արվեստասեր», ապա վերջին սրսկման ամիս-ամսաթիվը, հետևյալ հիշեցումով: «Չօգտագործել մինչև...»: Դռան աջ կողմում մի փոքրիկ տախտակ կար, որի վրա նշված էին հերթապահ բժշկի դիտումները. «Բավարար վիճակ», «վերանայել» կամ «բացասական արդյունք»:

Մի մայրապետ Ալբեր Պենսըլեին առաջնորդեց նրան հատկացված սենյակը: Մերկ պատեր: Ծալովի մահճակալ: Գրադարակ՝ գրքերով:

— Ամեն փորձարկողից հետո, իհարկե, փոխում ենք գրքերի ընտրությունը,— ասաց նա:— Ամեն փորձարկող ունի իր գրողը: Պրոֆեսորը խնդրում է, որ մեկ ժամից պատրաստ լինեք:

Պրոֆեսոր Օտտո Դյուպոնը Ալբեր Պենսըլեին ընդունեց հսկայական գրասեղանի ետևում, որ նման էր հռոմեական սարկոֆագի: Գրասեղանի վրա դրված էին հեռախոսներ, դիկտաֆոններ, բազմաթիվ լուսավոր կոճակներով էբոնիտե տախտակ, կատարելագործված հաշվիչ սարքեր, գրչակալ, նշումների տետրեր: Սեղանի երկու եզրերին, մարդակերի ատամների նման, շողշողում էին շլացուցիչ սպիտակ կո-

ղերով գրքեր: Մի լուսամփոփ՝ թաթերը հենած սեղանին, առողջ լույս էր սփռում տիրոջ դեմքին: Նրա մաշկը թարմ էր, հայացքը՝ բարեհամբույր: Բեղ չուներ:

— Դուք փորձարկու 14-ն ե՞ք,— հարցրեց պրոֆեսորը:

— Այդ համարը տեսել եմ իմ սենյակի դռան վրա... — պատասխանեց Ալբեր Պենսլենն:

— Դա, համենայն դեպս, կլինի ձերը: Նստեք: Տեսնենք: Անա ձեր թղթապանակը: Քսանհինգ տարեկան: Տվյալները, միջակություն...

Ալբեր Պենսլենն նախընտրեց համեստորեն իջեցնել կոպերը:

— Բնավորությունը՝ սովորական: «Z» ռեակցիան՝ սովորական... Զարգացածությունը՝ սովորական: Սեռական բարդույթը՝ սովորական... Հրաշալի է, հրաշալի: Դուք այն մարդն եք, որ հարկավոր է ինձ:

— Ես շոյված եմ,— մրմնջաց Ալբեր Պենսլենն:

— Այսօր պետք է ձեզ սրսկեմ անսանման ինքնավստահության սիճուկ՝ գոռոզամտության և խորհրդավորության թեթև երանգով: Դա շատ նուրբ ու բարդ խառնուրդ է: Պատրաստել եմ առաջին անգամ, քաղաքական մի գործիչի պատվերով: Սրսկումից հետո կհանգստանաք տասը օր: Այնուհետև, կփորձարկենք երազկոտի լուծույթը: Այսպես...

— Այդպիսով, ես պետք է տասը օրը մեկ փոխե՞մ բնավորությունս:

— Համարյա թե:

— Բայց դա սոսկալի է:

— Մի կարծեք: Ձեր բոլոր գործընկերները կարող են հաստատել, որ բնավ չեն տառապում այդ փոփոխություններից:

— Եվ այդպես երկու տարի:

— Կարող եք շարունակել, եթե ցանկանաք: Եվ վստահ եմ, կցանկանաք: Հապա պատկերացրեք, որ փոխելով խառնվածքը, բազմապատկում եք ձեր կենսական հնարավորությունները, տարին ապրելով երեսուն, երեսունհինգ կյանք, մինչդեռ ձեզ նմանները ապրում են ընդամենը մի կյանք: Վերջապես, չէ՞ որ դուք ուզում էիք ինքնասպանություն գործել: Երբ մարդ ուզում է ինքնասպանություն գործել, նշանակում է, այնուս չի դիմանում իր գոյավիճակին:

— Այո:

— Ես առաջարկում եմ այնուս չլինել այն, ինչ կաք: Եվ դուք գոհ կլինեք:

Ալբեր Պենսլենի տրամադրությունն ընկել էր: «Բա որ գժվեմ,— մտածում էր նա,— կամ, եթե փորձը ձախողվի, մեռնեմ»: Նա այնուս մեռնել չէր ուզում: Բայց պրոֆեսորն արդեն վեր էր կացել և հրում էր վարագույրով քողարկված դուռը:

Ալբեր Պենսլեն պրոֆեսորի ետևից մտավ կաթնավաճառի կրպակի նման սպիտակ մի սենյակ: Օդը հագեցած էր դեղորայքի և այրված ռետինի հոտով: Պատերին ամրացված դարակները բեռնված էին գույնզգույն հեղուկներ պարունակող սրվակներով: Սենյակի կենտրոնում դրված մարմարյա սեղանի վրա շարված էր թորանոթների, փորձանոթների, զոմաս ոլոր-մոլոր խողովակների մի ամբողջ դասակ: Գիտական այս ամանեղենը կտրատում էր լուսամուտների լույսը: Ապակյա գնդաձև անոթի մեջ կատաղի քլթքլթում էր կանաչավուն մի լուծույթ՝ մսանիշակագույն ցոլքերով: Ֆուրեն Վանթրը, աղեղ զոդողի նման, ակնոցի տակից հսկում էր եռացող հեղուկը:

— Պատրա՞ստ է,— հարցրեց Օտտո Դյուպոնը:

Ճերմակ զգեստով օգնականը անջատվեց ճերմակ պատից և թթուներից քայքայված մատներով բերեց մաղլյայով ծածկված մի պատրիկ տուփ: Պրոֆեսոր Օտտո Դյուպոնը ստուգեց պարունակության թափանցիկությունը և լեզուն ծպպացրեց:

— Վախենում եմ, թե կարիք չկար այսքան լուծելու: Դե, լավ, կտեսնենք գործողության մեջ: Փորձարկու 14, բարեկամս, իջեցրեք ձեր տաբատը և շուռ եկեք: Մի լարվեք:

Ալբեր Պենսլեն քիթը հպած պատին, մերկ հետույքը հանձնել էր վիրաբուժական չգիտես ինչ գրոհի: Քրտինքը բուռ-բուռ թափվում էր դեմքից: Իրենից մի քանի մետր այն կողմ զնգում էին ինչ-որ արտառոց գործիքներ: Մետաղյա տուփի մեջ ընկնող ասեղի ձայն, հանվող խցանի խուլ աղմուկ, ծորակի տխուր հեծկլտուք: Ապա մոտեցող ոտնաձայներ: Մի տաք շունչ ծոծրակին: Ռուսական կաշվի հոտ: Բամբակի խոնավ և դուրեկան շփում երիկամների ուղղությամբ: Նա փակեց աչքերը, սեղմեց ծնոտները, նախապատրաստվելով սոսկալի ցավի: Եվ հանկարծ սարսռաց հետույքին խրվող ասեղից:

— Վերջ,— ասաց Օտտո Դյուպոն:— Ազատ եք:

— Այդքա՞ն:

— Երևի ձեզ թվում էր, թե պիտի ոտքից գլուխ ծակծկեի՞: Մի տաս-տասնհինգ րոպեից կզգաք արդյունքը: Այսինքն կփոխեք ձեր անձնավորությունը, ինչպես օձն է փոխում շապիկը: Դուք կունենաք կամք, մտքի պայծառություն, ինքնավստահություն, բաներ, որոնց պակասը միշտ զգացել եք...

— Ծնորհակալ եմ,— ասաց Ալբեր Պենսլեն:

Նա զգուշությամբ շտկվեց, կարգի բերեց հագուստները և Ֆուրեն Վանթրի ուղեկցությամբ դուրս եկավ:

Պարտեզում Ալբեր Պենսլեն քայլում էր դանդաղ, իր մեջ հսկելով մի ուրիշ եսի արթնացումը:

Հղի կնոջ նման խուսափում էր կտրուկ շարժումներից, անզգույշ քայլ գցելուց, կարծես վախենում էր վիժել այն խորհրդավոր էակին, որի սաղմը կրում էր իր մեջ: Արդյո՞ք որևէ տարբերություն զգում էր: Ոչ, առայժմ ոչինչ: Իսկ հիմա՞: Դեռ ոչ: Մի թեթև գլխապտույտ և հաճելի խլրտոց, երկյուղ, սպասվող ծնունդի ուրախություն: Ի՞նչ կլինի ինքը վաղը: Լոկ կզգա մի անձնավորության անցո՞ւմը մյուսին: Կափսոսա՞ արդյոք իր նախկին վիճակը: Կափսոսա՞ արդյոք իրեն: Որքան մտածում էր այդ մասին, այնքան մելամաղձությունը պաշարում էր: Կարծես կանգնել էր կառամատույցում, իսկ ճեպընթաց գնացքը տարել էր լավագույն բարեկամին, բարեկամ, որ հազար պակասություն ուներ, գորշ էր և անողնաշար, ոչ առանձնապես խելացի էր, ոչ բարի, ոչ էլ այնքան անկեղծ, բայց, համենայն դեպս, լավ տղա էր: Մտքերը պտտվում էին նաև այն հին, մաշված, անփոխարինելի հագուստների շուրջը, որոնք մարդ դժվարանում է դեն գցել: Մտածում էր նաև կեղտոտ արվարձանների բնակարանների մասին, որոնց խեղճ ու կրակ հմայքը մարդու սիրտ է ճմլում: Նա խղճում էր իրեն, ողբում սեփական կորուստը: Ավելի լավ է մեռնես, քան դառնաս ուրիշ մարդ: Եվ ո՞ր առավելության համար, տեր աստված: Մի չնչին գումարի կամ մաքուր օդում հանգստանալո՞ւ համար: Ընդամենը սա՞ է դավաճանության գինը: Իսկ եթե հրաժարվի՞ փոխվելուց: Եթե նախընտրի մնալ ինքը: Հետույքի տաքությունը հիշեցրեց բժշկական իրականությունը: Նա Ֆոսթեն Վանթրին դարձրեց զայրալից և վճռական հայացքը:

— Դուք ինձ ձեռք բերեցիք, վակցինա եփողներ,— գոռաց նա,— բայց զգուշացնում եմ, որ վաղը ևեթ ես կհեռանամ այստեղից: Ոստիկանությանը կհայտնեմ ձեր արարքների մասին: Ես քեզ ու քո Օտտոյին բանտ կգցեմ, մինչև հասցնեք փոխել ինձ: Ի՞նչ ես ապուշի նման սեպերդ բացել, կտամ, կողերդ կփշրեմ...

— Պարոն,— բացականչեց Ֆոսթեն Վանթրը:— Երևի դեղաքանակը շատ է եղել...

Եվ նա շուրթերին մոտեցրեց մի փոքրիկ, արծաթյա սուլիչ:

— Ի՞նչ եք անում,— զարմացավ Ալբեր Պենսլեն:

— Ոչինչ, ոչինչ, սիրելի բարեկամ,— պատասխանեց նա:— Եթե ուզում եք, շարունակենք մեր զրոսանքը: Տեսնո՞ւմ եք այն երկու երիտասարդ կանանց, որ քայլում են ծառուղով: Նրանք նույնպես բնավորություն փորձարկող են: № 1 և 5, եթե չեմ սխալվում, այդպես են համարակալված:

— Աջ կողմինը ինձ դուր է գալիս,— ասաց Ալբեր Պենսլեն,— բարի եղեք...

Բայց չկարողացավ խոսքն ավարտել: Ֆոսթեն Վանթրի սուլոցի վրա եկած երկու երիտասարդները կապկպեցին ձեռ ու ոտը:

— Տարեք պրոֆեսորի մոտ,— կարգադրեց Ֆոսթեն Վանթրը: Ասացեք, թող շտապ մեղմացնի:

Ալբեր Պենսլեն պատեպատ էր խփվում, խելագարի նման գոռում, գոչում էր, կծում: Պրոֆեսորը նրան նստեցրեց աթոռին, մի ուրիշ սրսկում արեց, առաջինից երկու սանտիմետր ներքև:

— Ներեցեք,— ասաց պրոֆեսորը,— ես նախապես շատ եմ որոնել, մինչև գտել եմ պատվիրված քնավորությունը: Սա մասնագիտական անհարմարություն է: Ինչպե՞ս եք այժմ:

— Լավ,— ասաց Ալբեր Պենսլեն:— Բայց թող այլևս ինձ մարդ չմոտենա: Ես մենակ կգնամ:

Դռան շեմին հայտնվեց Ֆոսթեն Վանթրը:

— Ահա, արդեն հանգստացել եք:

Պենսլեն ուսերը թոթվեց: Արդեն խաղաղվել էր, ուժեղ էր և վստահ: Եվ հոգու խորքում անդիմադրելի պահանջ էր զգում հրամայելու, միևնույն է, ում և ինչ:

— Ես ուզում եմ, որ իմ սենյակում ծաղիկներ լինեն:

Զայնի հնչյունները դուր եկան իրեն: Զայնը հստակ էր և առնական:

— Իմ կարծիքով,— ասաց պրոֆեսորը Ֆոսթեն Վանթրին,— այս անգամ հաջողվեց: Սա իմ ամենամեծ նվաճումներից է:

Ալբեր Պենսլեն մի տեսակ հպարտություն էր զգում այս երկու մասնագետների հիացմունքից:

— Հանեք կապերը,— ասաց նա:

Երբ կապանքներից ազատեցին, նա վեր կացավ, ձեռքը մեկնեց Օտտո Դյուպոնին:

— Ցտեսություն, փորձարկու 14,— ասաց պրոֆեսորը:— Կհանդիպենք տասը օրից:

— Ինչպե՞ս թե տասը օրից:

— Այո, պետք է ձեզ երազկոտ դարձնեմ:

— Ես չեմ ուզում երազկոտ լինել: Ո՞ւմ է պետք: Այսպես լավ եմ:

Նա բռունցքը խփեց սեղանին: Օտտո Դյուպոնը լուռ մնաց: Եվ փորձարկու 14-ը դուրս եկավ տղամարդու ստիպանապատվությամբ, թևերը թափ տալով, կրունկները թխկթխկացնելով սալիկներին:

Հաջորդ առավոտյան փորձարկու 14-ը ուշ արթնացավ, հագավ մուգ տնային զգեստը, դրեց հիվանդի ապիտակ գդակը և իջավ պարտեզ:

Բնավորություն փորձարկողներին մի պարզ ցանկապատ էր բաժանում պարտեզում զբոսնող հաճախորդներից: Ալբեր Պենսլենն ընտրեց կաղնու տակ դրված նստարանին և մի գիրք բացեց ծնկների վրա: Օդը մեղմ էր: Արևի շողեր էին վետվետում ծառերի կանաչ ստվերների մեջ: Երիտասարդը շուտով հիրհրեց, հատորը ընկավ գետնին:

Արծաթահնչուն մի ծիծաղ արթնացրեց նրան: Բացեց աչքերը: Իրենից մի քանի քայլ այն կողմ նստած, աշխույժ զրուցում էին երեկվա կանայք:

Ալբեր Պենսլենն հպրգալից բարևեց նրանց, գդակը հանելով գլխից: Կանայք պատասխանեցին գլխի խոնարհումով: Կանանցից երիտասարդը հանկարծ ասաց.

— Դուք նոր փորձարկո՞ղ եք:

— Այո, տիկին:

— Օրիորդ:

— Ներեցեք:

— Ո՞ւմ եք ներկայացնում այսօր:

— Ում եմ ներկայացնո՞ւմ:

— Այո: Այսինքն ո՞րն է ձեր բնավորությունը:

— Հաստատակամ, գոռոզամտության և խորհրդավորության թեթև երանգով:

— Ինչ լավ է: Իսկ ես մեղմ եմ, անմեղ և նուրբ, ինչպես պոեզիայի ներշնչանք:

— Վատ չէ: Քանի՞ օրով:

— Դեռ հինգ օր կա:

— Ես լրիվ ինը օր ունեմ:

— Ձեր բախտը բերել է:

— Ինչո՞ւ:

— Տհաճ է շուտ-շուտ փոխվելը:

— Էհ, հրաժարվեք փոխվելուց:

— Տեսնո՞ւմ ես, մայրիկ, ինչ ինքնավստահն է, լավ է, չէ՞:

— Տիկինը ձեր մա՞յրն է:

Աղջիկը ծիծաղեց:

— Ոչ, նրան մայրիկ ենք ասում, որովհետև փորձարկողներից ամենահինն է: Խորհուրդներ է տալիս, ուղեկցում է...

Ալբեր Պենսլենն աթոռը մոտեցրեց նրանց: Զրույցը հիմա ավելի

անկաշկանդ, ավելի ուրախ էր դարձել, այն աստիճան, որ մոռացել էին նախաճաշի մասին:

Փորձարկու 14-ը պատմեց իր ձախորդություններից, ապա տեղեկացավ, որ օրիորդի անունը Յոլանդ Վենսան է, որ նրա ծնողները մահացած են և, որ Ֆոսթեն Վանթրը նրան փրկել է Սենա գետը նետվելու պահին: Աղջիկը գեղեցիկ էր՝ ձվաձև դեմքով և գունատ այտերով: Ուներ խոշոր, ծովականաչ աչքեր, որոնց նայվածքը խորհրդավոր կերպով հանգստացնում էր մարդու:

— Ես որոշել էի ջուրն ընկնել: Ծատ էի վախենում: Եվ հանկարծ զգացի, որ մի ձեռք բռնեց ուսիցս:

— Փառք աստծո,— ասաց Ալբեր Պենսլեն:

— Դուք շատ բարի եք:

— Ոչ, պարզապես եսասեր եմ:

Այդ պահին նրանց առջևով անցան երկու ուրիշ փորձարկուներ:

Նրանք Ալբեր Պենսլեի նման հագել էին մուգ զգեստներ:

— 7-ը այսօր «ծածկամիտ» է,— ասաց Յոլանդը:— Իսկ 12-ը ավարտում է «ջղային, բայց խորքում լավ մարդու» վերջին օրը:

— Կյանքը երևի այստեղ ձանձրալի է,— հառաչեց Ալբեր Պենսլեն:

— Չկարծեք,— ասաց մայրիկը:— Մենք ունենք փոքրիկ, համեստաշխ և ընկերական միջավայր... Այ, կտեսնեք, եթե երկար մնաք...

— Ես երկար կմնամ,— ասաց Ալբեր Պենսլեն և Յոլանդի վրա բևեռեց նվաճող մոնղոլի հայացքը: Օրիորդը ամոթխած իջեցրեց թարթիչները:

Կեսօրից հետո պրոֆեսոր Օտտո Դյուպոնը բոլոր զույգ համարներին հրավիրեց փորձարկումների ստուգատեսի:

Հսկա սրահում, որի հատակին շքեղ գորգեր էին փռված, կար մի բեմհարթակ և ոտքի վրա կանգնած միկրոֆոն: Հաճախորդները նստած էին ստվերում: Ֆոսթեն Վանթրը բեմից հայտարարում էր յուրաքանչյուր փորձարկուի բնութագիրը, իսկ հաճախորդները հարցեր էին տալիս նաև: Այն քաղաքական գործիչը, որը պատվիրել էր Ալբեր Պենսլեի խառնվածքը, մի գնդիկ պարոն էր՝ անհարթ մաշկի վրա ցցված մի քանի կարմիր մազերով և փղի միամիտ բիբերով: Նա հիացած էր արդյունքով:

— Դուք վստա՞հ եք, որ արդյունքը նույնը կլինի նաև ինձ համար,— հարցրեց պրոֆեսորին:

— Լիովին վստահ եմ: Իհարկե, մենք պետք է սիճուկը հարմա-

բեցնենք ձեր հյուսվածքին, բայց կարող եք վստահ լինել, որ ընդհանուր նմանությունը ապահովված է:

— Լավ է, շատ լավ է: Ասացեք խնդրեմ, փողոցի 14, դուք երբեք չե՞ք կասկածում ձեր կարծիքների ճշտությանը,— հարցրեց քաղաքական գործիչը:

— Երբե՛ք,— պատասխանեց Ալբեր Պենսլենն:

— Իսկ եթե կուսակցական կարգապահությունն արգելի մինչև վերջ արտահայտելու ձեր կարծիքը...

— Միևնույն է, կարտահայտեմ:

— Այ, այ, այ, ամենածանրը հենց դա է:

— Ես կմտնեի ուրիշ կուսակցության մեջ, կամ մի ուրիշը կստեղծեի ըստ պահանջի:

— Դե լավ: Իսկ եթե... Գլխի ընկնեք, որ ձեր ընկերը անհավատարիմ է... այսինքն կասկածեք...

— Դոնից դուրս կշպրտեմ:

— Տեսնո՞ւմ եք, հարկավոր է մի քիչ մեղմացնել,— հառաչեց գնդիկ պարոնը, խոսքն ուղղելով Օտտո Դյուպոյին:

— Ինչպես կամենաք: Հետագայում նույնպես միշտ կարող եք ցանկացած ուղղումների համար դիմել մեզ:

Ալբեր Պենսլենն բեմից հեռացավ բարյացակամ բացականչությունների ներքո: Խորքում նստած մի կին նույնիսկ ծափահարեց և «բռավո» կանչեց:

Վարագույրի ետևում որոշ գործընկերներ կծու շնորհավորեցին նրան:

— Ձեզ լավ ընդունեցին: Թեև ճիգ շատ գործադրեցիք:

— Պետք է խոստովանել, որ այդ բնավորությունը նպաստավոր էր ձեզ համար: Հետաքրքիր է, ուրիշ ի՞նչ կարող էիք այդպես ներկայացնել:

Մասնագիտական այդ նախանձը, այդ ողորմելի խաղը ջղայնացրեց Ալբեր Պենսլենին: Նա գնաց պարտեզ: Յոլանդ Վենսանը սպասում էր նրան: Այս անգամ մենակ էր:

— Վերջապես տեսնում եմ ձեզ,— բացականչեց Ալբեր Պենսլենն: Այն ծիծաղելի տեսարանից հետո, ուժեղ պահանջ ունեմ խոսելու ձեզ հետ: Մարդիկ մանրախնդիր են և չար:

— Որովհետև նախանձում են ձեր հաջողությանը:

— Այո, իրոք:

Աղջիկը ձեռքերը միացրեց իրար: Հիացմունքից աչքերը փայլում էին:

— Շատ ուրախ եմ ձեզ համար: Դե, մի քիչ պատմեք, լսեմ:

Ալբեր Պենսլեն նստեց և հայացքը առանց աղջկա դեմքից կըտրելու, պատմեց: Յոլանդը հուզիչ գեղեցկություն ուներ, մի տեսակ անպաշտպան գեղեցկություն, որ հովանավորության կարիք ունի: Եվ Ալբեր Պենսլեն անդիմադրելի ցանկություն ունեցավ պաշտպանելու նրան: Իրեն ուժեղ էր զգում: Սրտի խորքում արթնացավ պատասխանատվության քաղցր զգացում այս անզոր աղջկա նկատմամբ: Ինքը տեր էր և ձեռքը դրեց Յոլանդի ծնկին: Աղջիկը սարսռաց, գլուխը խոնարհեց:

Հետագա օրերին Ալբեր Պենսլեն աշխատեց պայքարել իր սիրո դեմ: Ոչ, որովհետև իրեն տհաճ էր սիրահարված լինելը: Ոչ: Պարզապես ուզում էր ստուգել իր զգացմունքի չափը, նախապես կասկածի ենթարկելով այն: Սակայն, շատ շուտով համոզվեց, որ բավական է Յոլանդին տեսնի, կասկածներն անմիջապես հօդս են ցնդում: Օր ու գիշեր նա մտածում էր Յոլանդի մասին, երազում Յոլանդին և իրենց միջև երևակայում այնպիսի հեշտասիրական տեսարաններ, որից մարդ ավելի է թուլանում, քան զգվանքներից:

Մի կիրակի, մայրամուտից քիչ առաջ, նա համբուրեց Յոլանդի շրթունքները: Սա չդիմադրեց, միայն լսվեց մի տեսակ կենդանական մնչոց: Խավարը թանձրացել էր: Հազիվ էր զանազանվում աղջկա դեմքը: Երջանկությունից արբած Ալբեր Պենսլեն համբույրներն ուղղում էր անանասի նուրբ բույր արձակող շրթունքներին, որոնք կիսաբացվել էին իր շրթունքների դեմ:

Հաջորդ օրը Յոլանդին տեսավ ժամը հինգին: Աղջիկը հաստատուն քայլվածքով անցնում էր փոքրիկ ծառուղով՝ իրենց ժամադրավայրով: Ալբեր Պենսլեն մոտեցավ նրան, բռնեց ձեռքերը: Բայց Յոլանդը կոպտորեն ետ քաշվեց և քրքջաց:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ալբեր Պենսլեն:

— Ոչինչ:

Երիտասարդը նայում էր աղջկան: Նրա մեջ փոփոխություն կար: Հայացքը չոր էր: Գլուխը բարձր պահած, մի տեսակ զգաստ և անհամեստ քրքջում էր: Դա շատ զարմանալի էր:

— Ինչո՞ւ այս առավոտյան չերևացիք,— հարցրեց Ալբեր Պենսլեն:

— Գնացել էի սրսկման:

Սուր վախը սողոսկեց Ալբեր Պենսլեի սիրտը:

— Եվ... և... Ո՞վ եք այժմ,— թոթովեց նա:

— «... Ողջախոհ կին, սթափ ուղեղով, իշխող, գործունյա, տնարար»: Պրոֆեսոր Օտտո Դյուպոնը շատ գոհ է:

Յոլանդն այնպես հիացած էր իր նոր բնավորությամբ, ինչպես կհիանան նոր զգեստով: Հուսահատությունից գլուխը կորցրած Ալբեր Պենսլեն փլվեց մի նստարանի վրա.

— Ինչպե՞ս, ախ ինչպե՞ս,— հառաչեց նա:— Մի՞թե հնարավոր է, որ այն սքանչելի, մեղմ, զգայուն, երազկոտ էակը...

— Արդեն կարող եք նրան հրաժեշտ տալ:

— Ինչպե՞ս կարող եմ հրաժեշտ տալ իմ սիրուն:

— Դա ուրիշ հարց է: Այ, դուք տղամարդու իմ սիրած տեսակն եք: Միայն կուզենայի, որ բեղ պահեիք, և եղունգները կարճ կտրեիք:

— Յոլանդ, Յոլանդ, ուրեմն հնարավո՞ր է...

— Ամեն ինչ հնարավոր է այս տանը: Սիգար չունե՞ք... Ախտոս, ես սիգար շատ եմ սիրում: Հա, ի՞նչ պիտի ասեի: Նստեք իմ կողքին: Եվ այդպես անաբեկված մի նայեք ինձ: Տեսեք, համբուրում եմ ձեզ:

Նա թեքվեց Ալբեր Պենսլեի կողմը և նրա շրթունքներին դրոշմեց փորձված կնոջ վարժ ու ծանր մի համբույր:

— Ո՜ւֆ, ինչ լավ է,— ասաց նա:

Խուլ զայրույթ բարձրացավ Ալբեր Պենսլեի հոգում: Կարծես այդ անտանելի ձևափոխության համար մեղավոր էր Յոլանդ Վենսանը: Նա արհամարհեց Յոլանդին իր ողորմելի ուրախության համար:

— Դուք... Դուք տղամարդու եք նման,— նետեց ատամների արանքից:— Բայց մի բան լավ իմացեք, ես կփշրեմ, կկոտրեմ այդ ինքնավստահությունը:

Յոլանդը հիմարի նման քրքջաց:

— Լռեք,— գոռաց նա:

Եվ ձեռքը բարձրացրեց, որ մի հատ հասցնի: Բայց այդ պահին մի ապտակ այրեց այտը:

— Հանգի՜ստ, հանգի՜ստ, փոքրիկս,— ասաց աղջիկը և հեռացավ, սխալ-մխալ սուլելով մի կովբոյական երգ:

Այս դեպքից հետո Ալբեր Պենսլեն շատ ծանր պահեր ապրեց: Նա ողբում էր իր կորած սերը: Ատում էր պրոֆեսոր Օտտո Դյուպոնին, երդվում էր վաղն ևեթ փախչել հիվանդանոցից: Եվ համենայն դեպս, չգիտես ինչ թուլություն, նրան պահում էր տեղում: Ավելին, ուզում էր հանկարծակիի բերել Յոլանդ Վենսանին, երբ սա սիգարը բերանին ճեմում էր ցանկապատի մոտ: Եվ հենց տեսնում էր նրան, դուրեկան սարսուռը նորից թուլացնում էր ձեռ ու ոտը: Ստիպված էր ընդունելու, որ սիրում է Յոլանդին, անկախ նրա նոր տեսքից: Իրեն

զայրացնող և տխրեցնող ամազոնուհու այդ կերպարի, այդ ինքնամփոփ հայացքի տակ թաքնված էր հարազատ մի էակ՝ առեղծվածային ու քնքուշ, որի հմայքից ազատվել չէր կարող: Պրոֆեսոր Օտտո Դյուպոնի սրսկումները ալեկոծել էին նրա էության մակերևույթը, բայց ներքին շերտերի աշխարհը, հոգու պատսպարած խորությունները, տաքության, կյանքի, սիրո աղբյուրը որոշակիորեն մնացել էին անաղարտ: Ալբեր Պենսլենն արժանապատվությամբ հաշտվեց Յոլանդի հետ և նահատակի համբերությամբ դիմացավ նրա շարժումներին ու պարծենկոտությանը: Նա տեսնում էր Յոլանդից այն կողմ: Փորձեց այդ բանը բացատրել աղջկան: Սա բան չհասկացավ, բայց նրան խեղացի համարեց:

Հետո, մի քանի օր անց, փորձարկու 14-ը նույնպես փոխեց իր անհատականությունը: «Երազկոտի» լուծույթը վատ էր հաշվարկված և նրան դարձրեց «թույլ ու անգույն»: Ընդ որում պրոֆեսորի հանախորդը հրաժարվել էր պատվերից և Օտտո Դյուպոնը անհրաժեշտ չէր համարում ուղղելու փորձարկուի խառնվածքը:

Յոլանդ Վենսանը նոր փոփոխությունը ընդունեց հեգնանքով:

— Ինձ համար սերը պայքար է,— ասաց նա:— Ես ինչպե՞ս պայքարեմ հանուն մի թրթռուրի:

— Դուք իրավացի եք: Ես ինձանից զզվում եմ,— կերկերաց Ալբեր Պենսլենն:— Ես թշվառականի մեկն եմ: Ես արժանի չեմ ձեզ: Ահ, եթե ուժ ունենայի, ինքնասպանություն կգործեի...

Խղճահարությունից դրդված աղջիկը փորձեց նրան ներշնչել մի քիչ ինքնավստահություն և տղամարդկային արժանապատվություն: Թեև Յոլանդը չէր կարող շարունակել ուսուցումը, որովհետև ինքը նույնպես պետք է շուտով փոխվեր, դառնար «տան կին, իրեն մի քիչ սուրբ երևակայելով և ընդունակ մաթեմատիկայի մեջ»: Այդ օրվանից Ալբեր Պենսլենն նրան այլևս չհետաքրքրեց: Բայց սա քարշ էր գալիս նրա ետևից, խոստումներ շշնջում, նամակներ գցում դռան տակից: Նույնիսկ մի անգամ Ֆոսթեն Վանթրին խնդրեց բարեխոսել իր համար: Բարեբախտաբար հաջորդ օրը Ալբեր Պենսլենն դարձել էր «անհոգ, կանանց մոտ հաջողակ և թղթախաղով տարված երիտասարդ»:

Նրանով հիացած ու հրապուրված Յոլանդ Վենսանը աշխատեց մտերմանալ հետը: Ապարդյուն: Ալբեր Պենսլենն նրան նայեց վերևից, ցուցադրելով Դոն-Ժուանին վայել մասնագիտական անտարբերություն և նրան թողած սկսեց աչք գցել մայրապետներին: Սիրահետում էր շենքի բոլոր կանանց, կանգնեցնում էր նրանց, բռնում կզակից և փափուկ ձայնով ասում.

— Ահ, այս աչքերը, այս աչքերը... մարդ ուզում է սուզվել նրանց մեջ...

Բայց արտի խորքում նույն ուժով սիրում էր Յոլանդ Վենսանին: Այս երկու արարածները, որոնց խառնվածքները երբեմն հակառակ էին իրար, տառապում էին, որ երջանկությունը խաբուսիկ է և իրենց ժըպտում է լոկ պատահականորեն և շատ կարճատև: Օտտո Դյուպոնի ասեղը դաժանորեն ընդհատում էր նրանց երջանկությունը: Նրանց ամբողջ ուրախությունը, ամբողջ տխրությունը կախված էր հետույքի արտառոց պրսկումից: Եզակի պահերի նրանք ողբում էին իրենց կապի անկայունությունը: Նստարանին կողք կողքի նստած խոսել, հասկանալ իրար, սիրել ու սիրվել և իմանալ, որ շուտով, մի դիվահարի որոշմամբ, նորից օտար են լինելու միմյանց: Վախենալ աշխարհում ամենասիրելի էակի համար: Վիճաբանել, անպատվել իրար, ներել, զարմանալ և կրկնել ամեն ինչ: Զգացմունքների այս խաղը այնպես էր շփոթեցնում նրանց, որ գլուխ էին կորցնում: Նրանք այլևս չէին ասում. «Քեզ սիրում եմ», այլ՝ «Այսօր քեզ այնպե՞ս եմ սիրում»: Այլևս չէին ասում. «Հիմա կանենք այսինչ բանը, կգնանք այնինչ տեղը», այլ՝ «Եթե դու շատ չես փոխվել, հիմա կանենք այսինչ բանը, կգնանք այնինչ տեղը»: Հաշվառման տախտակը ամփոփում էր նրանց հույսերը և ընկալումները:

— Ամսի 25-ին ինձ նշանակել են «թեթևաբարո կին, բայց որը սիրում է ուրիշի երեխաներին»:

— Ի՞նչ ես կարծում, Յոլանդ, մենք պիտի կարողանա՞նք սպասել իրար:

Աղջիկը նրան նայեց խորին տխրությամբ և շշնջաց:

— Վախենում եմ, որ ոչ, Ալբեր:

Ալբերը ճարահատյալ վազում էր Ֆոսթեն Վանթրի մոտ, խնդրում մի քիչ ուշացնել Յոլանդի պրսկումը և նրան ներարկել իրեն համապատասխան բնավորություն: Զուր ջանքեր: Ալբեր Պենսըլեի գործընկերները կարեկցում էին զույգին: «Սիրահարված քամելեոնները» դարձել էին նրանց հիմնական թեման: Օգտվելով այդ ժողովրդականությունից, Ալբերի Պենսըլեն աշխատեց փորձարկուներին ըմբոստացնել պրոֆեսոր Օտտո Դյուպոնի դեմ: Չհաջողվեց: Այդպես էլ պիտի լիներ, որովհետև այդ ոչխարները չունեին մտքի հետևողականություն:

Սեպտեմբերի վերջերին հույսերը կորցրած սիրահարները որոշեցին հաժարական տալ Օտտո Դյուպոնին: Գնացին գտան նրան, պատմեցին իրենց վիճակը, խնդրեցին ներողամիտ լինել, որ չեն կարող

սպասել պայմանաժամի լրանալուն: Օտտո Դյուպոնը մեծահոգի գտնվեց: Ոչ միայն չմերժեց, այլև խոստացավ մի փոքրիկ թոշակ նշանակել նրանց միատեղ կյանքի առաջին երեք տարվա ընթացքում: Մի սրսկումով նրանց վերադարձրեց նախկին բնավորությունները: Այդ սրրսկումը նրանք ընդունեցին սուրբ հաղորդության պես:

Մեկ ամիս հետո ամուսնացան և Պորտ դ' Իտալիի կողմերում վարձեցին երկու սենյականոց բնակարան:

Ամուսնության առաջին շրջանում երջանիկ էին: Երիտասարդ ամուսինները չէին հավատում իրենց բախտին: Քնել ու արթնանալ միևնույն էակի կողքին: Տանից դուրս գալ և իմանալ, որ վերադարձիդ տեսնելու ես նույն դեմքը, լսելու ես նույն խոսքերը և եթե հետագայում թյուրիմացություններ ծագեն, մեղքը միայն իրենցը կլինի:

— Կարծես երազում լինեմ,— շշնջում էր Յոլանդը:

— Ինչ լավ է, որ կարող ենք երազել, նախաձեռնել: Հիշո՞ւմ ես, ամազոնուհու քո ծիծաղելի բարքերը:

— Ծիծաղելի՞: Ինչո՞ւ: Ծիծաղելին դու էիր քո կեղծ Դոն-Ժուանի դերում:

Եվ նրանք ծիծաղում էին իրենց թշվառ անցյալի վրա:

Մի կիրակի նրանք բարեկամաբար այցելեցին պրոֆեսոր Օտտո Դյուպոնին: Եվ տուն դարձան տխուր ու մոլորված:

— Տեսա՞ր, նոր թև էին ավելացրել փորձարկուների տաղավարին, կանանց բաժանմունքի կողմից:

— Պարտեզն էլ փոքրացրել էին:

— Չէ, երևի այն ժամանակ էր մեծ թվում...

Օրերն անցնում էին օրերի ետևից, և Ալբեր Պենսլեն հետզհետե դառնում էր մտածկոտ, լռակյաց, ջղային:

Յոլանդն էլ իր հերթին հրաժարվում էր տանից դուրս գալուց և ժամերով անշարժ նստում էր բազկաթոռին, լուսամուտից նայում անձրևի տակ սուրացող ավտոմեքենաներին: Ալբերը վեր էր կենում, համբուրում կնոջ ճակատը և հողաթափերը քստքստացնելով նորից գնում իր անկյունը:

Ալբեր Պենսլեն շուտով հասկացավ, որ կնոջ կողքին ինքը մեռնում է ձանձրույթից: Միշտ միևնույն մարդը, միևնույն ձայնը: Կարոտով հիշում էր հիվանդանոցային կյանքը, երբ իրենց յուրաքանչյուր հանդիպումը մի անակնկալ էր: Երևակայության ազատությունը իրենց թույլ չէր տվել լավ պատկերացնելու այսօրվա կյանքը: Այժմ իրենց

չէր սպասում ոչ սարսափելի, ոչ էլ հաճելի բան: Ամեն ինչ խաղարկված էր նախապես: Միասպաղաղության և ապահովության դժոխք: Ալբեր Պենսըլեն ծածուկ սիրուհի պահեց: Յոլանդը նույնպես սիրեկան գտավ: Բայց երկուսի կապերն էլ կարճատև եղան: Նրանք դառնապես պես զղջացին, նորից որոնեցին միմյանց և խոստովանեցին իրենց մեղքը:

— Քեզ դավաճանել եմ, սիրելիս:

— Ես էլ քեզ եմ դավաճանել, սիրելիս:

Նրանք շատ գունատ էին, Ալբերը տխուր ձայնով աշխատեց արդարացնել իր վարքը:

— Ախր առաջ ես քեզ դավաճանում էի քեզ հետ: Տասը օրը մեկ դու դու չէիր, ես էլ ես չէի...

— Ախ, քեզ շատ լավ եմ հասկանում:

— Վախենում էի քեզ կորցնել: Բայց ամեն կորցնելիս, զարմանալի կերպով նորից քեզ գտնում էի մի ուրիշի մեջ: Դու չկայիր և կայիր: Դու ինձ էիր պատկանում, առանց ինձ պատկանելու...

— Հիշո՞ւմ ես, մի օր ասացի. «Սերը ինձ համար պայքար է»: Դու այն ժամանակ մի խեղճ, ճնշված մարդ էիր: Այ, կուզենայի, որ դու հանկարծ նույնը դառնայիր...

— Ես էլ կուզենայի, որ դու դառնայիր այն լեզվանի, մաթեմատիկայից ուժեղ կինը...

— Օհ, Ալբեր, Ալբեր, արդեն ամեն ինչ կորած է:

Եվ լաց եղավ:

— Ամբողջ կյանքում,— կերկերաց նա,— դու կմնաս դու, ես կմընամ ես: Սոսկալի է, չէ՞:

— Այո, սոսկալի է, Յոլանդ: Այո, սոսկալի է,— շշնջում էր նա, մանրիկ համբուրելով կնոջ այտերը:

Հաջորդ օրը Ալբեր Պենսըլեն և կինը նորից աշխատանքի անցան Օտտո Դյուպոնի մոտ: